

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 4 (24)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՆԸ Է

Թաւրիզում 20 դրան
Գաւառներում 25 դրան

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Ռուսաստան 4 ռբ. 50 կ.
Թուրքիա 50 դրան
Եւրոպա 12 ֆրանկ
Ամերիկա 2,50 տոլ.

Յայտարարութիւններ վճար
Առաջին երեսում տպագրելու 20 ցանկ
Զարուրդ 10
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 8 ՇՆԱՐ

Խմբագրութեան հասցեն՝ Թաւրիզ
Միտքի խմբագրութիւն կամ Tauris Perse
Rédaction du journal arménien „MITK“
= Adresse télégraphique Tauris „MITK“ =

ՄԻՏԿ

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱԶԱՐԱԿԱՆ

اداره روزنامه ميطق

Anzeigebblatt fuer Persien

MITK

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
Le Gérant
Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPTION
for a year payable in advance. 20 kran.
Foreign Dollars 2. 50
RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1st page 10 cent
" " " " 4-th " 5 "
15% discount for annual subscrip-
tion paid in advance. Address
The „MITK“ Publication Co.
Tabriz, Persia

Published by the „MITK“ Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

4. ՏԱՐԻ № 4 (24) ԹԱՒՐԻԶ, ԶԱՐԲԱԹ 1 ՓԵՏՐՈՒԱՐ 1914 Թ. Tauris, Samedi le 14 Fevrier 1914 № 4 (24) Vol. III

ԲԱՑՈՒԱԾ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

„Մ Ի Տ Բ“-Ի

1914 Թ-Ի 4. ՏԱՐԻՆԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՆԱԿ

ВУЗСАГԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Требуйте и курите папиросы только

М. Д. „Эр. Сейлановых“

Египетскія, Ирисъ, Паросъ, Прима, Орелъ и Марсъ.

продаются во всѣхъ магазинахъ

ՀԱՄԲՈՒՐԳ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԾԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՌԻԼԵՏՈՐՍԵՐ ԴԷՊՈ ԳԵՆԵԴԵ, ՀԻՒՍ. ԵՒ
ՀԱՐ. ԱՄԵՐԻԿԱ

Ով ցանկանում է աժան արժեքով և յարմարութեամբ Ամերիկա գնալ, պէտք է գնայ Համբուրգ-Ամերիկեան գծի ովկիանոսային մեծ շոգեմուտերով:
Եւրաբանչիւր անհատ, ով մեզ կգրի, շուտով և առանց վճարի կստանայ
Ս. ՎՈԼՓԺ ԵՐ. Կենտրոնական Ագենտուրայից մանրամասն տեղեկագիր:

հասցէ՝ Hamburg (Germany)

Glockengiesserwall 13

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Ղլտճանին վերստին կարգ կընաւո-
րութեան ընդունելով աղէտայի փորձերի,
միջնորդութեան և Վեհի խոստումնա-
տուութեան դէմ՝ խմբագրութիւնն ամսիս
27-ին Զուլֆի վրայով սուեց հեանեալ
բողոք հեռագիրը:

Թաւրիզ 27 Յունվ.

Էջմիածին

Նորին Սրբութիւն

Գէորգ Ե. Կաթողիկոսին

Հոգոյ ամենաբարեւոյն ցասմամբ և դառ-
նագոյն վրդովմամբ բողոքում ենք էքս
վարդապետ Ղլտճանին, լըստ միջնորդու-

թեանց, վերստին միաբան ընդունելու
Ձեր խոստման դէմ: Միանում ենք միա-
բանների արժանիքաւ բողոքին: Խնդրում
ենք խափանել Նիկոլ Թորոսովիչեան նոր
դէպքերի ազգակործան կրկնութիւնը:

Խմբագրութիւն «Միտք»

Կօպին «Մշակին»

ԽնԱՅԵՑԷՔ, ՄԻ՝ ԿՈՐԾԱՆԵՔ
ԷՋՄԻԱԾԻՆԸ.

Մի Իրիս, խառնութեան մի չար դե
միշտ պիտի անպակաս լինի մեր դժբաղդ
Մայր Աթոռում:

Այս անգամ խառնութեան այդ ժանտ
դեմ հանդիսանում է նորէն՝ տխրահռչակ

էքս վարդապետ Ղլտճանը, որ եօթ ու
կէս տարի առաջ ամենայն անարգանք
և չարաբանութեամբ՝ դէն էր շարտե
իւր սրբմբ, կոչումը, և մահու կռիւ յայ
տարաբել իւր կարգակիցների ու եկեղե-
ցոյ դէմ:

Եկեղեցոյ երեսմի յայդ «անառակ
որդին» ասում, են իբր թէ «դարձի, մե-
ղայի» է եկել: Ուստի և զօրեղ միջնորդ-
ների բարձրատիճան հոգեւորականներից
մէջ են ընկել Սմ. Հ. կաթողիկոսի մօտ,
որ նա, այդ «անառակ որդին», վերստ-
տին ընդունուի ի կարգ կուսակրօն հոգե-
ւորականութեան: Թէ ինչո՞ւ, այդ միայն
գիտէ սատանան, միջնորդները և «Հին
Աստուածներ» հակադարձօրէն աշխար-
հից վանք բերել ձգտող հայ Արիոս Ղլտ-
ճանը:

Եւ, ով մեծի հրաշիցն, Հայոց
Հայրապետն էլ ընդունել է այդ տարա-
մբժ միջնորդութիւնները, հաւատացել
է այդ հայ Մանրեցոյ «դարձին» և խոս-
տացել Աստուածամարտ և ամենայն
սկզբունք ոսնատակ տուած այդ պարոնին
նորէն «հայր» Ղլտճանն դարձնել:

Սրանից աւելի լինծ խայտառակու-
թիւն չէր կարող լինել, որ այսօր սաստ-
կապէս խռովել է հայիւ հանդարտուած
և իրար մէջ պառակտուած էջմիածնի
միաբանութիւնը:

Ինչ «պաղափար» արդե՞ր, ինչ «պ-
նիւ ձգտում», և «ինչ սրբազան մի հուր»
է մղում էջմիածնի 5000 ռուբլին զրպա-
նող, 7 ու կէս տարի վանքը վստօրէն
լքած, թքած պարոնին՝ նորէն վանք
դառնալ և շարիք լինել:

Երևի զրանով չեն հետաքրքրուել
մեր բարձրատիճան «սրբազան հայրե-
րը» որ Վեհի, մօտ խղճի են միջնորդի
«անառակ սրդուն» վերստին կնգուց և վե-
րարկու տալու, որ պակաս թողա՞ն այ-
ժում լրացնի:

Ոչ միայն միջնորդութիւն, այլ և չիք
վարդապետի անուն անգամ լսել պիտի
չուզենար Վեհը: Ինչ է մնացել էջմիած-
նում, որ եղածն էլ քանդիլ, կործանել
են ուզում խիստաբարձը:

Ինչ վերաշինիլը գործի, ժողովրդ-
դական ինչ հսկայ վերածնութեան է
ձեռնարկում, որ եղած պարտապ կամ
անտես առնուած ներհմուտ միաբաննե-
րը անբաւարար ու անկարող են համա-
րում կատարել և կարօտում է հայ կեան-
քի Ահրիման Ղլտճանի վերստին ի
կարգ կրօնւորութեան կոչման և նրա

«անփոխարինելի ծառայութեան»:
Ցաւալի է այս բոլորը և անհա-
ղութիւն ամեն՝ թիչ թէ շատ դիպցիպի-
նայ, վարկ, բարոյականութիւն մտածող-
ների, և Մայր Աթոռի գտնուած միա-
բանների համեմաշխութիւնը բարձր
դասողների համար:

Մեզ թւում է... նորից դառնում են
Նիկոլ Թորոսովիչի անիծալից և կործանա-
բար օրերը ի կորուստ ազգի, էջմի-
ածնի և միաբանութեան: Եւ կոյր պէտք
է լինել այդ շտեմնելու համար Ղլտճա-
նի դարձով:

Ինչ ունի իր մէջ հմա Ղլտճանը,
որ հնար ու հանդուրժելի լինէր նորէն
նրան իր մրտած եկեղեցոյ պաշտօնեայ
կարգել, համարիլ իր հաւատացած ու
ծաղրած աւետարանի առաքեալ և տ-
շակիրա Քրիստոսի, որի ոչ հեղ հոգին
ունի, ոչ էլ պահանջած անձնութիւն
թիւնն ու, մանաւանդ, հղբայրութիւն-
թիւնը:

Ինչ անէ՞ք է ծանրացած Լուսա-
ւորչի Աթոռին, որ ուր մի անգամը,
զրամանկը, իր կոչումն ու աւետարա-
նը հեղնողը կայ ի բիրտն և յարիւն
են մտնում բերել նրան ի պապատորու-
թիւն եկեղեցոյ, իմա ի կործանում և ի
քակտում նորա և միաբանական ուխ-
տին:

Չեզ միաբաններ են պէտք՝ փրկէք
հայաժանրից Ոսկերեան Բենիկին, բե-
րէք արտօրից Մանուկ Յուսիկին, Բե-
սարաբիական Մնյուշ բերդից ի գործ հի-
րաւիրէք մեր օրերի ծիրայր Խորճենա-
ցուն: Պոյսի կամաւոր արժքից գրկա-
յաց ընդունէք անզուգական Երմիշտ
Գոմիտասին, մեկուսացրէք անձեռնա-
նիրին և լաշն տապաւելք բացէք կու-
րօրէն չկորացրած մեր բանասիրական
զրականութեան պարծանք կարմրեալ
սրբազանին, ներհուն Միաբանին, հան-
դիւր ընկերակիցներով:

Այս հոյակապ, սրտացաւ և էջմիա-
ծնաարժան անձանց կողքին առ ինչ
արդեօք բաղդախնդիր և կեանքում իր
պոյսը պահել չկրցող ինչ որ... ոչ-յի-
շատակարժան Ղլտճան: Այդ Չեզ
ենք հարցնում հայոց Դիտապետ:

Միթէ պէտք կայ մերկացնել կամ
պարզաբանել Ղլտճան անձի դէմքը
Միթէ անձանօթ է նրա վատահամբաւ
անցիակը: Մոռացուած է միթէ նրա Ս.
Սարգսի վանահայրութեան զրամների
գոյունը կամ ինչ որ հաշուեմտեանի

